ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանում տեղի ունեցած հանրային լսում՝ «Գրաֆշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ

24.12.2024թ. Պտղավան բնակավայր

ՕՐԱԿԱՐԳ: **Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի՝ 200 հզորությամբ դպրոցի և 40 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցում:**

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Միեր Աղամյանը,

Նոյեմբերյան համայնքի Ավագանու անդամ Արայիկ Պարոնյանը, Պտղավան բնակավայրի վարչական ղեկավար Կարեն Աբովյանը, Պտղավան բնակավայրի դպրոցի տնօրեն Լեռնիկ Սաֆարյանը, ուսուցիչներ Տարոն Բաբաջանյանը, Տիգրան Զուխրյանը, Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական հարցերով մասնագետ Սոնա Գևորգյանը, «Գրաֆշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արամ Այվազյանը, ճարտարապետ Արթուր Ղուլիջանյանը և բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2024թ. դեկտեմբերի 24-ին, ժամը 12:00-ին, Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանում տեղի ունեցավ «Գրաֆշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրում նախատեսվող 200 հզորությամբ դպրոցի և 40 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ

ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հնչեց հարց թե արդյոք հնարավոր չէ չքանդել գործող դպրոցը , ինչին «Գրաֆշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արամ Այվազյանը և ճարտարապետ Արթուր Ղուլիջանյանը պարաբանեցին որ այդ դեպքում սանիտարապաշտպանիչ գոտու պահպանման խնդիր է առաջանում:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչները, որոնց հիմնականում հետաքրքրում էր գործունեության ավարտի հետ կապված ժամկետները և թե մանկապարտեզը քանի երեխայի համար է նախատեսված: Նրանք միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ համայնքի մասնակիցները որոշեցին հավանություն տալ «Գրաֆշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրում նախատեսվող 200 հզորությամբ դպրոցի և 40 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքներին:

Արձանագրությանը կցված է հանրային լսումների մասնակիցների ցանկը:

«ԳՐԱՖՇԻՆ» "GRAPHSHIN" «ГРАФШИН» 05552376

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան